

Արևելյան գործընկերության երիտասարդական ֆորում, 2013թ

Արևելյան գործընկերության երիտասարդական ֆորումը կազմակերպվել էր Լիտվայի ԵՄ նախագահության և Արևելյան գործընկերության՝ «Կոնտակտներ մարդկանց միջև» Հարթակ 4-ի շրջանակներում: Այն տեղի է ունեցել հոկտեմբերի 22-25-ին Լիտվայի Կաունաս քաղաքում:



Երիտասարդական ֆորումին ներկա էին մոտավորապես 200 մասնակից՝ երիտասարդներ, երիտասարդ հետազոտողներ և երիտասարդական քաղաքականություն իրականացնողներ՝ Արևելյան գործընկերության երկրներից: «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն»-ը մասնակից կազմակերպությունների շարքում էր և ներկայացված էր կազմակերպության անդամ Արփինե Մաժինյանի կողմից:



Ֆորումի նպատակներն էին՝

- Երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության դերի բարձրացումը, մասնավորապես՝ սոցիալական ընդգրկվածության, միջազգային, ազգային, տարածքային և տեղական մակարդակների միջև սիներգիաներ կառուցելու տեսանկյունից,

- Տեղական մակարդակում ոչ ֆորմալ կրթության և երիտասարդական աշխատանքի որակի և տեսանելիության բարձրացումը, և Արևելյան գործընկերության և «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի երկրների միջև երիտասարդական աշխատանքի հաջողված փորձերի փոխանակման խրախուսումը,
- «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի Արևելյան գործընկերության Երիտասարդական պատուհանի շրջանակներում ցուցադրել առկա երիտասարդական համագործակցությունը և ուսումնասիրել Էռազմուս+ ծրագրի առաջարկած հնարավորությունները:

Արփինե Մաժինյան